## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ, ք. Գյումրի, 17/06/2022 երկու հազար քսաներկու թվականի հունիսի տասնյոթ
Մենք՝ «ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵՒ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» Փակ բաժնետիրական ընկերություն, հասցե՝ Գյումրի ՇԻՐԱԿԱՑՈՒ 13 / չկա, գրանցման համար՝ 29.140.00521, ՀՎՀՀ՝ 05502201, <<ԱՅՍՈՒՀԵՏ ՎԱՐՁԱՏՈՒ>> ի դեմս տնօրեն՝ ԱՐԵՎԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԾԵՐՈՒՆՅԱՆԻ, ծնված՝ 19/07/1966թ-ին, ՀԾՀ՝ 6907660229, կենսաչափական անձնագիր՝ BA1471309, տրված՝ 064-ի կողմից, 29/01/2015թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, Լ. ՄԱԴՈՅԱՆ Փ., 219, Տ / մի կողմից և «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին, հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 13, 0010, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, <<ԱՅՍՈՒՀԵՏ ՎԱՐՁԱԿԱԼ>> ի դեմս ԳԱՅԱՆԵ ՀԵՆՐԻԿԻ ԳԱԼՈՅԱՆԻ, ծնված՝ 05/06/1967թ-ին, ՀԾՀ՝ 5514670015, նույնականացման քարտ՝ 006293807, տրված՝ 016-ի կողմից, 01/11/2017թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՉԱՐԵՆՑԻ Փ., 7Ա, Շ, 24ԲՆ , որը գործում է համաձայն լիազորագրի, լիազորագիրը տրված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղար ԱԳՆԵՍԱ ՌԱՖԻԿԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ, ծնված՝ 30/04/1977թ-ին, ՀԾՀ՝ 8004770010, անձնագիր՝ 009448887, տրված՝ 011-ի կողմից, 26/07/2018թ-ին, բնակության հասցե՝ ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ Փ., 6, Շ, 44ԲՆ կողմից 12/05/2022թ. -ին,/ մյուս կողմից կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալին ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2 նշված գույքը
1.2. Վարձատուն պարտավորվում է վարձակալին հանձնել հետևյալ գույքը `անշարժ գույքից տարածք 60,71քմ./ հարյուրերրորդական քմ./,ընդհանուր օգտագործման տարածք -246,56քմ./երկու հարյուր քառասունվեց ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական քմ./, ամբողջ անշարժ գույքը բաղկացած է ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ -3097.75քմ.,ՀՈՂԱՄԱՍ ` ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - 0.588005հա., 3097.75քմ. շենք շինություններից `2987.34քմ. պոլիկլինիկա, 25.6քմ. օժանդակ շինություն, 41.96քմ. պարիսպ, 42.85քմ. պարիսպ, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փող., թիվ 13/տասներեք/(ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵՒ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ) հասցեում ԱՅՍՈՒՀԵՏ ‘ԳՈՒՅՔ’
1.3. Գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով ինչը հաստատվում է համաձայն
1.4. Գույքը Վարձակալին պետք է հանձնվի սույն պայմանագիրը ստորագրելու օրը:
1.5.Գույքը նախատեսված է օգտագործել որպես բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու նպատակով :

1.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:
1.7. Սույն պայմանագիրը կնքելու պահին օբյեկտը վաճառված, նվիրված չէ, գրավ դրված չէ , արգելանքի տակ չի գտնվում, որը հաստատում է ՀՀ կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման կողմից տրված թիվ ՄՏ-02062022-08-0390 միասնական տեղեկանքով, տեղեկանքում տվյալները լրացված են 02/06/2022թ. -ին :

1.8.Վարձակալը իրավունք ունի 1.2 կետում նշված գույքը ենթավարձակալության տրամադրելուն , վարձատուի գրավոր համաձայնության դեպքում:

## 1. 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի

2.1.1. Վարձակալից պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը:

2.1.3. Պահանջել լուծելու պայմանգիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ գույքի նշանակությանն անհամապատասխան:

2.2. Վարձատուն պարտավոր է

2.2.1. Գույքը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2. Գույքը վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով:

2.2.3. Վարձակալին նախազգուշացնել գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների / գրավի իրավունք սերվիտուտ և այլն / մասին

2.3. Վարձակալն իրավունք ունի

2.3.1. Պահանջել վարձատուից սույն պայմանագրի 1.4. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը:

2.3.2. Վարձատուից պահանջել իրեն տրամադրել գույքի պատկանելիքները և դրան վերաբերող փաստաթղթերը:

2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունները հայտնաբերելիս իր ընտրությամբ:

2.3.3.1.Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները, կամ համաչափ իջեցնելու վարձավճարը:

2.3.3.2.Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

2.3.4. Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, գույքի վիճակը վատթարացել է:

2.4. Վարձակալը պարտավոր է

2.4.1. Ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար նախատեսված վճարը:

2.4.2. Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում, հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

2.4.3. Պահպանել հակահրդեհային կանոնները և պատասխանատվություն կրել հետևանքների համար:

Վարձատուի և վարձակալի համաձայնությամբ կարող են վաղաժամկետ լուծել պայմանագիրը:

2.5. Վարձավճարի հաշվարկը կատարվելու է 01/01/2022թվականը/մեկը հունվարի երկու հազար քսաներկու թվականից/: Վարձավճարի չափը 01/01/2022թվականից/մեկը հունվարի երկու հազար քսաներկու թվականից/ մինչև 01/05/2022թվականը /մեկը մայիսի երկու հազար քսաներկու թվականը/ամսական 150,000/մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ որը ներառում է ՀՀ օրենքով սահմանված հարկերը,իսկ սույն թվականի մայիսի 1-ից մինչև սույն թվականի դեկտեմբերի 25՝-ը ամսական 160,000/մեկ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ գումար որը ներառում է ՀՀ օրենքով սահմանված հարկերը:

Պայմանագրի վերջնաժամկետը սահմանելով 2022թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ,սահմանելով պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմք ՝ Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի պետական սեփականություն հանդիսացող շենքում տեղակայվելու դեպքում պայմանագիրը ենթակա է լուծման ցանկացած ժամանակ ՝

15/տասնհինգ/ օր առաջ վարձակալի կողմից վարձատուին ծանուցելու դեպքում, պայմանագրի գործողությունը տարածվում է 2022թվականի հունվարի մեկից ծագած հարաբերությունների վրա:

2.6. Կոմունալ բոլոր տեսակի ծախսերը կատարվում է վարձատուի կողմից :

2.7. Վճարներն ուշացնելու դեպքում Վարձակալը վարձատուին վճարում է տուգանք համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

2.8. Տուգանքի / տուգանքի կամ տույժի / վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:
2.9. Վարձատուն պատասխանատվություն չի կրում, գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են վարձակալին կամ պետք է վարձակալի կողմից հայտնաբերվեին
2.10. Գույքը զննելիս, կամ գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգված է:

2.11. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամ լուծվել, եթե վարձակալը:
2.12.Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով:
2.12.1.Էականորեն վատթարացել է գույքի վիճակը.
2.12.2.Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրացնելուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը և այլն:
2.12.3.Խախտել է պայմանագրով նախատեսված որևէ կետի պահանջը:
Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննության:
2.13. Սույն պայմանագրով կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից: Սույն պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:
2.14. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է նոտարական գրասենյակի վարույթում, իսկ մնացած օրինակները տրվում է կողմերին:
Պայմանագրի տեքստը նոտարի կողմից ընթերցվեց բարձրաձայն:

ՎԱՐՁԱՏՈՒ

ՎԱՐՁԱԿԱԼ

Հայաստանի Հանրապետության անունից 17/06/2022 երկու հազար քսաներկու թվականի հունիսի տասնյոթ Սույն պայմանագիրը վավերացված է իմ ՀՀ <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար ՝ ՌՈԲԵՐՏ ՏՈԼԻԿԻ ՄՈՒԿՈՒՉՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ների) լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունք(ներ)ը ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:Գրանցված է գրանցամատյանում թիվ 3355 ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ռոբերտ Տոլիկի Մուկուչյան


H=3.20, h=3.00, D=0.3, d=0.
Մ 1:200
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ
246,56 քմ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ
60,71



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 23 հունիսի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Շիրակացու փողոց 13 (Գյումրու Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա)

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր՝ վավերացված 17.06.2022 թվականին, գրանցամատյան թիվ 3355

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

**ՎԿԱՅԱԿԱՆ N 23062022-08-0037, գաղտնաբառ՝ 33VB4AXK7A3U**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 08-001-0346-0013-001 | Պոլիկլինիկա | 60.71 քմ | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա են 246.56քմ մակերեսով ընդհանուր օգտագործման տարածքներ: Ժամկետը՝ մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գոհար Պողոսյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 23062022-08-0037, գաղտնաբառ՝ 33VB4AXK7A3U**